

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան

Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի

2017թ. -ի գործունեության

վերաբերյալ

2018թ.-ի հունվարի 18-ին ժամը 14:00-ին կայացավ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի 2017թ.-ի հաշվետվությունը՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ Համլետ Կուրդինյանի մասնակցությամբ:

Հարգելի Արտամեցիներ, հարգարժան համայնքի ավագանու անդամներ և հյուրեր ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սահմանված կարգի համաձայն այսօր ես ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր համայնքապետարանի կողմից 2017 թվականին կայացած աշխատանքները ըստ գործունեության բնագավառների

Հաշվետվության ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2017 թվականի ընթացքում գումարվել է համայնքի ավագանու թվով 8 և 2 արտահերթ նիստ, որի արդյունքներով կայացվել է 24 որոշում, քննարկվել է ֆինանսական հարցեր:

Ֆինանսների բնագավառում.

2017 թվականի համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերը:

ՀՀ օրենսդրության սահմանված կարգով 2017 թվականի ընթացքում տնօրինվել են համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը: Օրենքով սահմանված կարգով որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքում կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումներ: 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պլանով սահմանված`

Հողի հարկ` 8810.0 հ.դ --- 7401.8 հ.դ 84%

Գույքահարկ` 223.0հ.դ --- 150.2 հ.դ 67 %

Հողի վարձ,` 261.9հ.դ --- 262.2 հ.դ 100 %

Սեփական եկամուտների մուտքերի ապահովման համար իմ կողմից գրավոր թողարկվել է բոլոր մեծ պարտքեր ունեցող հողի սեփականատերերին և վարձակալներին և ժամկետ է սահմանվել որպեսզի մինչև տարեվերջ հավաքագրվի և մուտքագրվի պլանով նախատեսված գումարը:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

Ինչպես ձեզ հայտնի է 2005 թվականից պայմանագրային սկզբունքով «Տեդաս» ՍՊԸ պայմանավորվել էր համայնքում բնական գազի անցկացման աշխատանքներ իրականացնել, որի համար համայնքային բյուջեից 52.0 միլիոն հհ դրամ փոխանցվել է այդ նպատակի համար, բայց աշխատանքները չեն կատարվել:

Գազաֆիկացման աշխատանքները դադարեցվել են: Քրեական գործ է հարուցվել «ՏԵԴԱՍ» ՍՊԸ շինարարական կազմակերպության վրա: Քրեական գործը ընթացքի մեջ է:

Հողօգտագործման բնագավառ.

Հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանության խնդիրները լուծելու համար համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել հողօգտագործողների, հողի սեփականատերերի կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողություն է սահմանվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը, հողային հաշվեկշռի կազմման, ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ:

Աշխատանքի և սոց ծառայության բնագավառ.

Հիշատակված բնագավառում համայնքի ղեկավարը աջակցել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, պայմաններ է ստեղծել համայնքի ազգաբնակչությանը աշխատանքի անցնել գյուղատնտեսությանի աշխատակազմում և դպրոցում:

Գյուղատնտեսական բնագավառում.

ա) Հունվարի 1-ից մինչև 17-ը համայնքում առկա կենդանիների ըստ տեսական հաշվառում և սահմանված ժամկետում հաշվառման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է վիճակագրական ծառայություն:

Համաձայն այդ հաշվառման պարզվել է, որ համայնքում կա մանր եղջերավոր՝ 2656 գլուխ, խոշոր եղջերավոր անասուններ՝ 436 գլուխ, խոզեր՝ 80, թռչուն՝ 735 :

բ) Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված պետության կողմից պատվիրակված լիազորության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իր իրավասությունների սահմաններում կազմակերպվել է առկա անասնազխաքանակության հիվանդությունների կանխման, ինչպես նաև հակահամաճարակային միջոցառումները և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

գ) Համայնքի ղեկավարի աջակցությամբ 2016 թվականի աշնանը և 2017 թվականի գարնանը Արմավիրի մարզպետարանի և ՀՀ գյուղ. նախարարության օգնությամբ ձեռք բերվեց դիզելային

վառելանյութ, պարարտանյութ և այն պայմանագրային կարգով բաժանվեց գյուղացիական տնտեսություններին:

Համայնքի ղեկավարը հաշվետվությամբ ընկած ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերում գյուղացիական տնտեսություն վարող ֆերմերների մարդկային ռեսուրսներով ապահովելու հարցում, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 30 աշխատատեղ և միջին օրական աշխատավարձը կազմել է 6000-7000 ՀՀ դրամ:

Համայնքի հողային հաշվեկշռի համաձայն մեր համայնքում հաշվարկված է 778.15 հեկտար վարելահող, 611.05 հեկտար բազմամյա տնկարկներ:

Համայնքապետարանի կողմից հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները ըստ մշակաբույսերի ներկայացվել վիճակագրական ծառայություն:

Համայնքում կատարվում է աղբահանություն՝ ըստ գրաֆիկի:

Հիմնախնդիրներ

1. Ներհամայնքային փողոցների կառուցում
2. Համայնքի գազաֆիկացում

Համայնքի ղեկավար՝

Ա. Դավթյան